ԻՐԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՅՑԵԼԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

19.06.2019 20:35

Իրանի Իսլամական Հանրապետության փաստաբանների պալատի պատվիրակությունը հունիսի 19-23-ը հյուրընկալվել է ՀՀ փաստաբանների պալատում:

Պատվիրակության կազմում են ԻԻՀ փաստաբանների պալատի նախագահ Իսա Ամինին, Պալատի նախագահի տեղակալ Ջաֆար Քուշան և ԻԻՀ փաստաբանների պալատի իրավական աջակցության վարչության պետ Հոսեյն Մոհամադը: Պատվիրակության հետ Փաստաբանների պալատ էր այցելել ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան նորին գերազանցություն Սեյեդ Քազեմ Սաջջադը:

Այսօր հայ գործընկերների հետ հանդիպման ընթացքում հայ և իրանցի գործընկերները միմյանց ներկայացրել են իրենց կառույցները:

Ողջունելով հյուրերին՝ Փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը նշել է,-«**Հուսով եմ մեր շփումները կնպաստեն փորձի փոխանակմանը: Փաստաբանի գործն անկախ ազգությունից և պետության տարածքներից միևնույնն է: Մենք կոչված ենք մարդկանց իրավունքները պաշտպանել, իսկ պետությունն էլ մեզ համար պայմաններ է ստեղծում, որպեսզի այդ գործունեությունն իրականացնենք: Չնայած որ շատ հաճախ հենց պետական մարմիններից ենք պաշտպանում քաղաքացիներին**»:

Իրանի դեսպանը իր պատասխան խոսքում հայտնել է,- «**այս այցը շատ կարևոր էր մեզ համար և ես էլ առիթը պատեհ համարելով մեր պատվիրակության հետ ցանկացա այցելել ձեզ: Վստահ եմ՝ մեր համագործակցության սկիզբը մեր երկու երկրների ժողովուրդների համար շատ մեծ դեր է ունենալու**»:

Իրանի փաստաբանների պալատի նախագահը ողջույնի իր խոսքում նշել է, որ ինքը իր տանն է գտնվում որովհետև ցանակցած երկրում որտեղ էլ որ լինի փաստաբանն այդ երկրի Փաստաբանների պալատ այցելելով գտնվում է իր տանը:

Իրանի փաստաբանների պալատի նախագահի խոսքով փաստաբանությունը Իրանում ունի 111 տարվա պատմություն: 1953 թվականից Իրանի փաստաբանների պալատը աշխատում է ազատ և կախվածություն չունի ոչ մեկից:

Իսա Ամինիի խոսքով Իրանի փաստաբանների պալատի նախագահի պաշտոնը հավասարեցված է գլխավոր դատախազի պաշտոնին:

Երկու կողմերը ընդհանուր դրույթներով ներկայացրել են իրենց կառույցները, պայմանավորվածություն ձեռք բերել վաղը՝ հունիսի 20-ին, մասնագիտական քննարկումներ ծավալել: Ավարտին իրանցի գործընկերները շրջայց են կատարել Փաստաբանների պալատի շենքում:



PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })